



**ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ**

27 օգոստոսի 2019 թ.

N 698-Ն

ք. Ստեփանակերտ

**ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՓՈՓՈԽՎԱԾ
ՊԼԱՆՆԵՐԻ՝ ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՇՐՋԱԿԱ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ՀԵՏ
ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Ընդերքի մասին օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 25-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Ասհմանել ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման փոփոխված պլանների՝ ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի հետ համաձայնեցման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:



ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ՈՆԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ստից № 12/48
04.09.2019թ. (ստորագրություն)

Հավելված
Արցախի Հանրապետության
կառավարության 2019 թվականի
օգոստոսի 27-ի N 698-Ն որոշման

Կ Ա Ր Գ

**ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՓՈՓՈԽՎԱԾ
ՊԼԱՆՆԵՐԻ՝ ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՇՐՋԱԿԱ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ՀԵՏ
ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ**

1. Սույն կարգով կարգավորվում են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման փոփոխված պլանների՝ ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի հետ համաձայնեցնելու հետ կապված հարաբերությունները:

2. Ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների (այսուհետ՝ պլան) յուրաքանչյուր փոփոխություն ուժի մեջ է մտնում շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) հետ սահմանված կարգով համաձայնեցնելուց հետո՝ բացառությամբ սույն կարգի 5-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված դեպքի:

3. Փոփոխված պլանը համաձայնեցնելու նպատակով ընդերքօգտագործողը, պլանի ժամկետը լրանալուց, իսկ ընդերքօգտագործողի նախաձեռնությամբ պլանի փոփոխության դեպքում՝ փոփոխված պլանն ուժի մեջ մտնելուց առնվազն երեք ամիս առաջ, լիազոր մարմին է ներկայացնում դիմում՝ թղթային տարբերակով (հաստատված հայտատուի ստորագրությամբ) կամ էլեկտրոնային տարբերակով:

4. Դիմումին կից ներկայացվում են՝

1) փոփոխված պլանը.

2) ֆինանսական նոր երաշխիքը կամ ֆինանսական երաշխիքի ժամկետի երկարաձգման մասին ֆինանսական երաշխիք տված իրավաբանական անձի պատշաճ վավերացրած փաստաթուղթը:

5. Դիմումի գրանցման օրվանից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, լիազոր մարմինը քննարկում է դիմումին կից ներկայացված փոփոխված պլանը և ֆինանսական երաշխիքը, որի արդյունքում ընդերքօգտագործողին ծանուցում է՝

1) փոփոխված պլանը լիազոր մարմնի հետ համաձայնեցված համարելու մասին, կամ

2) փոփոխված պլանը լրակազմման վերադարձնելու մասին, որի դեպքում սույն կետով սահմանված ժամկետը համարվում է կասեցված մինչև ընդերքօգտագործողի կողմից լրակազմ փաթեթի ներկայացման օրը, կամ

3) փոփոխված պլանը մերժելու մասին, կամ

4) փոփոխված պլանը շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա լինելու մասին, որի դեպքում պլանը համարվում է լիազոր մարմնի հետ համաձայնեցված շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացության ստացման պահից:

6. Լիազոր մարմինը սույն կարգի 5-րդ կետի՝

1) 1-ին ենթակետով նախատեսված ծանուցումն ուղարկում է ընդերքօգտագործողին, եթե ընդերքօգտագործողի կողմից ներկայացված դիմումը, փոփոխված պլանը և ֆինանսական երաշխիքը բավարարում են Ընդերքի մասին օրենսգրքի պահանջները և փոփոխված պլանը ենթակա չէ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» օրենքի.

2) 2-րդ ենթակետով նախատեսված ծանուցումն ուղարկում է ընդերքօգտագործողին, եթե դիմումին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կարգի 3-րդ և 4-րդ կետերի պահանջներին.

3) 3-րդ ենթակետով նախատեսված ծանուցումն ուղարկում է ընդերքօգտագործողին, եթե փոփոխված պլանը կամ ֆինանսական երաշխիքը չեն համապատասխանում Ընդերքի մասին օրենսգրքի՝ պլանին և ֆինանսական երաշխիքին վերաբերող պահանջներին, ինչպես նաև այն դեպքում, եթե ընդերքօգտագործողի կողմից սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված ծանուցումն ստանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում լրակազմված փաթեթը լիազոր մարմին չի ներկայացվում.

4) 4-րդ ենթակետով նախատեսված ծանուցումն ուղարկում է ընդերքօգտագործողին, եթե փոփոխված պլանը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» օրենքի:

7. Ծանուցումն իրականացվում է թղթային տարբերակով դիմում ներկայացվելու դեպքում՝ թղթային, իսկ էլեկտրոնային տարբերակով ներկայացվելու դեպքում՝ էլեկտրոնային տարբերակով:

8. Եթե սույն կարգի 5-րդ կետով սահմանված ժամկետում լիազոր մարմինը դիմումի վերաբերյալ ընդերքօգտագործողին չի ծանուցում, ապա դիմումը համարվում է բավարարված և պլանը լիազոր մարմնի հետ համաձայնեցված: